

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran  
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts  
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their  
gratitude to “JTI ARMENIA” CJSC  
for sponsoring the publication of this volume

**Մատենադարան**  
**Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և**  
**«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը**  
**երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին**  
**սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար**



MATENADARAN  
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**BULLETIN OF MATENADARAN**  
**33**

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
**33**

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**33**

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան  
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Օ. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 33, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. երևան, 2022: 536 էջ (ներդիր 16 էջ):*

*Հ 33/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2022:*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմությունը, բանասիրությունը, արվեստին և բնագիտությունը նվիրված հոդվածներ, երիտասարդական 7-րդ գիտաժողովի (2021 թ. նոյեմբերի 25-27) նյութեր, հրապարակումներ և մի հաղորդում:*

## ԿԻՒԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՈՐՈՎԱՆՔԸ ԵՎ ԳՐՉԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

*Բանալի բառեր՝ Կիլիկիա, Ակներ վանք, Զորոբերդ վանք, Վարդան Կիլիկեցի, գրչության կենտրոն, գրատուն, ձորովանեցի գրիչներ, երաժիշտներ, նկարիչներ, հիշատակարան:*

Զորովանքը հայ միջնադարյան հոգևոր և վանական մշակութային կենտրոններից է և գրչության, մանրանկարչության ու երաժշտական արվեստների պատմության մեջ ունի իր ուրույն տեղը: Վանքում գրվել և մեզ են հասել տարբեր բովանդակությամբ մոտ մեկ տասնյակից ավելի ձեռագիր հուշարձաններ՝ Ավետարան, Մանրուսմունք, Շարական, Հայսմավուրք, մեկնողական գործեր: Զորովանքի և գրչության գոյության մասին տեղեկություններ իմանում ենք ԺԳ և ԺԴ դարերի ձեռագիր վկայություններից, որոնք ամփոփված են Մաշտոցի անվան Մատենադարանի, Երուսաղեմի, Վենետիկի, Վիեննայի ձեռագրական հավաքածուներում և ձառագրացուցակներում:

Գրչագիր հիշատակարաններում վանական հաստատությունը հիշվում է որպես անապատ՝ «գրեցաւ... ի յԱնապատիս Զորոյ վանք կոչեցեալ»<sup>1</sup>, «յանապատս, որ կոչի Զորոյ վանք» (ՄՄ 8570, թ. 198բ)<sup>2</sup>, մենաստան՝ «գրեցաւ... ի մենաստանիս, որ կոչի Զորոյ վանք» (ՄՄ 7034, թերթ 300բ), «Աւարտեցաւ... յաստուածաբնակ մենաստանիս ի Զորովանս»<sup>3</sup>, սուրբ ուխտ կամ վանք՝ «Սուրբ ուխտն Զորոյ կոչեցեալ վանք»<sup>4</sup>, վանք՝ «... ի վանքս, որ Զորոյ վանք անուն կոչի»<sup>5</sup>:

Վանքի գտնվելու վայրի մասին սուղ տեղեկություններից հայտնի է, որ այն

\* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, պ.գ.թ., hasbadalyan@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ ապրիլի 4, 2022, գրախոսելու օրը՝ ապրիլի 27, 2022:

<sup>1</sup> Եղվ. 1566, Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց (այսուհետ՝ Ն. Պողարեան, Յուցակ), հ. 5, Երուսաղեմ, 1971, էջ 341:

<sup>2</sup> Վնտկ. 709, Հ. Ճեմեմեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ (այսուհետ՝ Հ. Ճեմեմեան, Յուցակ), հ. Գ, Վենետիկ, 1993, էջ 1094:

<sup>3</sup> Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար (այսուհետ՝ Հիշ. ԺԳ դար), Երևան, 1984, էջ 853:

<sup>4</sup> Ա. Դանիելեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան (այսուհետ՝ Յուցակ), Անթիլիաս, 1984, էջ 37:

<sup>5</sup> Եղվ. 3602, Ն. Պողարեան, Յուցակ, հ. 11, Երուսաղեմ, 1991, էջ 19:

կառուցվել է Լեոնային Կիրիկիայում: Ջորովանքում մատյաններ ընդօրինակած Գրիգոր գրիչը միակն է, ով վկայում է այդ մասին. «Գրեցաւ սա ի Կիրիկեցւոցս աշխարհ» (1331թ.)<sup>6</sup>: Մեկ այլ հիշատակարանում Գրիգորը գրում է. «Գրեցաւ սա ի Կիրիկեցւոց աշխարհի ի Լեոնային կողմանս» (1334թ.)<sup>7</sup>: Ջորովանքի տեղորոշման համար կարևոր է նաև անապատի անվան ընտրությունը. ենթադրելի է, որ վանքն իր անունը ստացել է ձորում կառուցված լինելու համար:

Ջորովանքին նվիրված ուսումնասիրություններում կա այն կարծիքը, որ մենաստանը գտնվել է Բարձրբերդի և Ակներ վանքի մոտակայքում<sup>8</sup>: Դ. Ալիշանը հիմք ընդունելով 1329 թ. մենաստանում օրինակված ձեռագրի գլխավոր հիշատակարանը, վանքի մասին գրել է. «Ոչ լոկ վկայարան՝ այլ և մենաստան ճանաչի յարակից կամ բաժանորդ մեծի ուխտին Ականց»<sup>9</sup>: Վանքի պատմությանն ու գրչական ժառանգությանն անդրադառնալով՝ համանման կարծիք է արտահայտել նաև Հ. Ոսկյանը՝ Կիրիկիայի վանքերին նվիրված իր ուսումնասիրության մեջ. «Այնպէս կը թուի, թէ Ակներ վանքի մերձ ձոր մը եղած ըլլայ եւ անոր քով վկայարան մը կառուցուած ի պատիւ Ս. Թէոդորոսի կամ Թորոսի եւ այն՝ ենթակայ Ակներ վանքի, բայց ապա վանականներու բնակավայրերով օժտուած ու վանք եղած»<sup>10</sup>: Ձեռագրագետ Ա. Մաթևոսյանը Ջորովանքը նույնպես տեղադրել է Ակներ վանքի մոտակայքում<sup>11</sup>:

Նկատենք, որ Ակներ վանքի տեղադրությունը և դիրքը հստակեցված չէ: Հարցին վերաբերող ուսումնասիրություններում նշվում են տարբեր տեսակետներ<sup>12</sup>: Համաձայն ակներցի գրիչների հաղորդումների՝ վանքը հիմնարկվել է «ի գավառիս Յախուտ» կամ «ի Լեոնային կողմանս» Կիրիկիայի<sup>13</sup>: Կարելի է ենթադ-

<sup>6</sup> Վնտկ. 164, Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ (այսուհետ՝ Բ. Սարգիսեան, Յուցակ), Բ. Ա., Վենետիկ, 1914, էջ 698:

<sup>7</sup> Տ. Պալեան, Յուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա (այսուհետ՝ Յուցակ), Վիեննա, 1963, էջ 33:

<sup>8</sup> Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմեցին Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Բ. Յ, Երևան, 1991, էջ 489:

<sup>9</sup> Դ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 156:

<sup>10</sup> Հ. Ոսկեան, Կիրիկիայի վանքերը, Վիեննա, 1957, էջ 229:

<sup>11</sup> Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, Երևան, 1998, էջ 99:

<sup>12</sup> Ակներ վանքի աշխարհագրական դիրքին վերաբերող կարծիքները և տեղեկությունները տե՛ս Հ. Բաղայան, «Ակների վանական միաբանությունը և գրչական ժառանգությունը», *ԲՄ*, Բ. 28, Երևան, 2019, էջ 264:

<sup>13</sup> ԱՄՆ 154, Avedis K. Sanjian, *Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, Los Angeles – London, 1976*, p. 675-677: Եղմ. 157, Ա. Սիւրմէան, Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի սրբոց Յակոբեանց վանքի, Բ. Ա., Վենետիկ, 1948, էջ 341: Նոր Ջուղա 31, Ս. Տէր-Աւետիսեան, Յուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, Բ. Ա., Վիեննա, 1970, էջ 148:

րել, որ աշխարհագրորեն Ակներն ու Ջորովանքը գտնվել են իրար մոտ:

Ակների միաբանությունը լինելով Կիրիկիայի կայացած և հեղինակավոր հոգևոր ու մշակութային կենտրոններից, միջվանական կապեր ու հարաբերություններ է ունեցել Կիրիկիայի և Հայաստանի վանական կենտրոնների և գրչության դպրոցների հետ՝ մեծ դեր խաղալով հատկապես գրչության արվեստի զարգացման գործում: Նման համագործակցության մասին է վկայում Գրիգոր գրիչը՝ Ջորովանքում 1329 թ. օրինակած Հովհաննես Ոսկեբերանի «Մեկնութիւն Մատթէի» գրչագրի հիշատակարանում: Գրիչը «աստուածահաճոյ աղաւթիւք» աղաչում է հիշել Ակների միաբանության «սուրբ», «պատուելի», «հեզահոգի» հոգևոր հայրերին, որոնք ընդօրինակման համար շնորհել են գաղափար օրինակը<sup>14</sup>: Գրիգորը համատեղ աշխատել է նաև Ակներ վանքում և արտագրել մատյաններ 1325-1332 թթ.<sup>15</sup>:

Երբեմն Ջորովանքը<sup>16</sup> նույնացվել է Ջորոբերդ վանքի հետ: Ջորոբերդի աշխարհագրական դիրքը անորոշ է<sup>17</sup>: 1250 թ.<sup>18</sup> այստեղ՝ «յանապատիս, որ կոչի Ջորոյ բերդ»-ում օրինակված «Մեկնութիւն Կաթողիկեայց թղթոց» ձեռագրի հիշատակարանում գրիչ Ստեփանոսը հիշում է Սամվել երաժշտապետին: Բանասեր Ա. Երեմյանը Սամվել վարդապետին նվիրված իր հոդվածում վերջինիս ներկայացնում է որպես Ջորովանքի մշակութային գործիչ<sup>19</sup>:

Ջորովանքի հիմնադրի, կառուցման ժամանակի և հանգամանքների վերաբերյալ տվյալներ չեն պահպանվել: Կարծում ենք անապատը հին վանք չի եղել: Հավանական է Հ. Ոսկյանի այն ենթադրությունը, որ վանքը «Ռուբինեան հարս-

<sup>14</sup> «Եւ արդ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա ընթերցմամբ կամ լսելով, յիշեսչիք աստուածահաճոյ աղաբիքի զմիաբան եղբայրոպիւն հրեշտակաբնակ Ուխտին Ակներոյ՝ զհոգևոր հարբն մեր, զԹեոմնի սուրբ վարդապետն զՏէր Վարդան, եւ զպատուելի ֆահանայն զՍտեփանոս փակակալն եւ զԳրիգորն եւ զԿոստանդին հեզահոգիսն եւ զԹորոս ժառանկն, որ ի վերայ ամենայն երախտեացն, զոր արարեալն էին մեզ՝ յաւելին եւ զայս եւ յցին զփափաք սրտի իմոյ եւ շնորհեցին զարինակն, որ գրեցի զսա, որեսցէ Տէր զնոսս ի գիրն կենաց, ամէն» (տե՛ս Վիեն. 1465, Հ. Սեֆուլեան, *Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին ի Վիեննա* (այսուհետ՝ *Յուցակ*), հ. Գ, Վիեննա, 1983, էջ 217, հմմտ. Դ. Ալիշան, *Սիրուան*, էջ 156):

<sup>15</sup> Հ. Բաղալյան, *նշվ. աշխ.*, էջ 273-274:

<sup>16</sup> Համանուն վանք գործել է Մեծ Հայքի Վասպուրական աշխարհում, տե՛ս Հ. Ոսկեան, *Վասպուրական-Վանի վանքերը*, Վիեննա, 1940, էջ 251:

<sup>17</sup> Վանքը ներկայացվում է որպես պատմական Հայաստանի անապատներից (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, էջ 489):

<sup>18</sup> Գ. Հովսեփյանը ձեռագրի գրչության աղհատված տարեթիվը ընթերցել է ՈՂԹ (1250), (տե՛ս Գ. Յովսեփյան, *Ֆիշատակարանք ձեռագրաց*, Անթիլիաս, 1951, էջ 1009: Ա. Մաթևոսյան, *Հիշ. ԺԳ դար*, էջ 255-256):

<sup>19</sup> Ա. Երեմյան, «Երաժշտապետ Սամվել վարդապետ», հ. 11, *էջմիածին*, 1954, էջ 43-44: Հեղինակն անդրադարձել է ձորովանեցի գրիչներ Իգնատիոսին և Առափելին՝ ներկայացնելով նրանց օրինակումներից մեկական աշխատանք:



տուժեան սկիզբները չէ հիմնուած»<sup>20</sup>: Հիշատակարանային երկու վկայություններում նշվում է վանքի մաս կազմող վանական կառույցներից Սուրբ Թորոսի վկայարանը: 1329 թ. Գրիգոր գրիչը վկայում է. «Գրեցաւ... ընդ հովանեալ քաջահաղթ վկայարանիս, որ կոչի Ջորոյն Սուրբ Թորոս»<sup>21</sup>: 1331 թ. օրինակած Ավետարանի հիշատակարանում Գրիգորը նշում է. «Գրեցաւ սա... ընդ հովանեալ վկայարանիս, որ կոչի Ջորոցն սուրբ Թորոս»<sup>22</sup>: Վկայարան-սրբատեղի շինությունը, ուր հավանաբար պահվել կամ ամփոփված են եղել սրբի մասունքներ, ի համեմատություն վանքին կից այլ կառույցների, կարծում ենք համեմատաբար ավելի ուշ է հիմնվել:

Ջորովանքի գրիչները տեղեկացնում նաև Սուրբ Աստվածածին, Սուրբ Նշան և Սուրբ Սիոն եկեղեցիների մասին, որոնց հովանավորությունը գործել է վանքը: Այստեղ 1333 թ. արտագրված Ավետարանի գրիչը գրում է. «Արդ, փափագմամբ զսա գրեցի/ Ի վանքս, որ Ջորոյ վանք անուն կոչի,/ Ընդ հովանեալ Աստուածածնի/ եւ կենսակիր Սուրբ Նշանի»<sup>23</sup>: Գրիչ Առաքելը 1326<sup>24</sup> և 1338 թթ. օրինակած Մանրուսում գրչագրերի հիշատակարաններում վկայում է. «Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Մանրուսումն... յանապատս, որ կոչի Ջորոյ վանք, ընդ հովանեալ Սուրբ Աստուածածնիս եւ կենսակիր Սուրբ Նշանիս» (ՄՄ 8570, թ. 198բ): 1334թ. գրված Ավետարանի գրիչ Գրիգորը նույնպես նշում է. «Գրեցաւ սա ի Կիրիկեցւոցս աշխարհ... ընդ հովանեալ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Նշանիս»<sup>25</sup>: Հովանավորների մասին նշում են նաև Գրիգոր գրիչը՝ «ընդ հովանեալ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Սիոնի և մերոյին գլխոյ Հայաստանեացս Լուսաւորչի և այլ կենսակեր սուրբ նշանացս...»<sup>26</sup> և Ստեփանոս գրիչը՝ «ի Սուրբ ուխտն Ջորոյ կոչեցեալ վանք, ընդ հովանեալ Սուրբ Նշանացն եւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Սիոնի»<sup>27</sup>:

Եկեղեցիների հիմնադրման ժամանակի, արտաքին և ներքին հարդարանքների մասին սկզբնաղբյուրները տեղեկություններ չեն ընձեռում: Հավանաբար, մենաստանը ունեցել է գրատուն-մատենադարան, ճգնավորների և վանքաբնակ վանականների բնակություն համար կառուցված շինություններ: Առկա տվյալներից նկատելի է, որ Ջորովանքի և եկեղեցիների կառուցումը ավարտված է եղել 13-րդ դարավերջին՝ մինչև 1299 թ.:

<sup>20</sup> Հ. Ոսկեան, նշվ. աշխ., էջ 230:

<sup>21</sup> Վիեն. 1465, Հ. Սեֆուեան, Յուցակ, էջ 217:

<sup>22</sup> Տ. Պալեան, Յուցակ, էջ 33:

<sup>23</sup> Եղմ. 3602, Ն. Պողարեան, Յուցակ, հ. 11, էջ 19:

<sup>24</sup> Վնտկ. 709, Հ. Ճեմեմեան, Յուցակ, էջ 1094:

<sup>25</sup> Վտնկ. 164, Բ. Սարգիսեան, Յուցակ, էջ 698:

<sup>26</sup> Ա. Մաթևոսյան, Հիշ. ԺԳ դար, էջ 853:

<sup>27</sup> Ա. Դանիկեան, Յուցակ, էջ 37:

Անապատում օրինակված գրչագրերի հիշատակարաններում վանքի առաջնորդների մասին հիշատակումներ չկան: Այս հանգամանքը Հ. Ոսկյանը մեկնաբանում է այսպես. «Ակների ենթակա էր եւ այս պատճառով Ակների առաջնորդներն էին միանգամայն անոր այցելուները»<sup>28</sup>: Նշենք, որ 1307 թ. Սսի եկեղեցական ժողովի մասնակից կիրիկեցի յոթ վարդապետներից հիշվում է Ջորովանքի վանահայր Թորոսը<sup>29</sup>: Ղ. Ալիշանը Թորոսի մասին գրում է. «Առանձինն վանահայր չիլի սորա ի ժողովին Սսոյ յամի 1307, Թորոս անուն, փիլիսոփայ մակաւնուանեալ, որ նշանակէ քաջ երաժիշտ կամ հմուտ երգոց, որպիսի էր և համանուն աւագերէցն արքունի՝ Թորոս Թափրոնց, և այլք ոմանք համանուանք»<sup>30</sup>:

Վանքի պատմությունը մինչև 1299 թ. և 1338 թ. հետո մնում է անհայտ: Անապատում ակտիվ գրչական գործունեությունը ծավալվել է 1299-1338 թթ. միջև ընկած ժամանակահատվածում: Կարելի է ենթադրել, որ վանքում հոգևոր և մշակութային կյանքը շարունակվել է 1338 թ.-ից հետո ևս, սակայն այդ մասին որևէ տվյալ կամ սկզբնաղբյուր չեն պահպանվել<sup>31</sup>:

Վանքում արտագրված ձեռագրերի հիշատակարանները մեզ գաղափար են տալիս անապատի բազմանդամ միաբանության մասին: Ջորովանքի գրիչները հիշում են եղբայր միաբաններին՝ «ստացողաց գրոյս եւ պատրաստողաց նիւթոյս եւ աշխատողացն»<sup>32</sup> և ներկայացնում յուրաքանչյուրի գործունեության ոլորտը: Գրիգոր գրիչը իր գրած հիշատակարաններում հիշում է Ստեփանոս քահանային, «որ յուղղին ընդ մեզ աշխատեցաւ», «գաւրինակս խնդրեաց եւ եբեր, եւ սպասաւորեաց մեզ ի գրելս» (1329 թ.), մեկ այլ Ստեփանոսի, «որ զհամաբարբառն գրեաց» (1331 թ.), Կարապետ քահանային, որ «զիւր Աւետարանն ետ» (1329 թ.), Վարդան «զսուրբ» քահանային, որ «զարեամբ նահատակն... բազում տառապանաւք էր գրեալ գաւրինակս երիս արինակս մերձ ունելով» (1329 թ.), Հովհաննես, Ստեփանոս և «սուրբ... եւ արեամբ նահատակն» ծերունի Սամվել քահանաներին, որոնք եղել են «բանիւք եւ արդեամբք միշտ յորդորաւդ... ի գրեալս» (1329 թ.), Սերովբե քահանային, «որ աշխատեցաւ ընդ մեզ յուղղել գրոցս արինակաւ» (1329 թ.), ձեռագրի պատվիրատուներ «պատուական եւ սրբասնեալ» Պողոս քահանային (1334 թ.) և Առաքելին (1329 թ.) ու

<sup>28</sup> Հ. Ոսկեան, նշվ. աշխ., էջ 230:

<sup>29</sup> Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, Ս. էջմիածին, 2001, էջ 1180, Հ. Ոսկեան, նշվ. աշխ., էջ 230:

<sup>30</sup> Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 156, Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 2, Երևան, 1942, էջ 355:

<sup>31</sup> Ջորովանքի ամունը պարզապես հիշատակվում է 1374թ. օրինակված ձեռագրի հիշատակագրության մեջ. «Գրեցաւ սա ձեռամբ վերջին եւ մեղսաբաւալ եւ անաւթան գծաւլի Եսայի արեղայի ի Բաղալս Սիս, ընդ հովանեաւ Սուրբ Նիկայոսի եւ կենսակիր Սուրբ Նշանացս Ջորովանքն և Արփայկաղնոյն եւ Վանկոյ Սուրբ Նշանին»: Հ. Ոսկյանը հավանական չի համարում, որ 1420 թ. ս. Թորոսի վանքում գրված Հավաքածուն պատկանում է Ջորովանքին (տե՛ս Հ. Ոսկեան, նշվ. աշխ., էջ 131, 233)

<sup>32</sup> Հ. Սեֆոկեան, Յուցակ, էջ 217:

նրանց հարազատներին, Վասիլ մառանապանին (1329 թ.), Գրիգոր միակեց վանականին (1329 թ.), Անպետ ոսկերիչին (1334 թ.): Առաքել գրիչն աղաչում է հիշել Մարկոսին՝ «դաստիարակ եւ սպասաւոր մեր... զի բազում աշխատեցաւ ի սմա» (1333 թ., 1338 թ.), «գարբասէր եւ զպատուական» Ստեփանոս քահանային և իր քեռորդուն՝ պարոն Թորուն (1333 թ.), Սարգիս սարկավագին, «որ հանապազ կու սպասաւորէր մեզ» (1326 թ.), «աստուածարեալ և պատուական քահանայ» Գրիգոր (1326 թ.) և «սրբանունդ, սրբասէր եւ պատուական» Ներսես սարկավագ (1338 թ.) պատվիրատուներին, Հովհաննես միայնակեցուն (1326 թ.)<sup>33</sup>:

Գրիչները հիշատակարաններում կարևորում են իրենց օգնողներին՝ գրքի նյութը մշակողների ու կազմողների աշխատանքը: Գրիգոր գրիչը խնդրում է հիշել թուղթ «կոկող» Հոհաննես քահանային<sup>34</sup> և Մարտիրոս սարկավագին<sup>35</sup>, կազմող Մարտիրոս քահանային<sup>36</sup>: 1325 թ. օրինակված ձեռագրի գրիչ Առաքելը նաև թղթյա մատյանի կազմողն է. «Աղաչեմ զհանգիպողք սորին, թէ կարգայք կամ աւկտիք ինչ ի սմանէ, յիշել ի բարին Քրիստոս զառաջասացեալ ստացաւդ եւ զկազմաւդ սորա, զխաւարեալ ոգիս՝ [Առաքել]»<sup>37</sup>:

Ջորովանքի գրատանը աշխատել են նաև մանրանկարիչներ Կարապետ քահանան, ով «զծայրս ճառիցս ծաղկազարդեաց»<sup>38</sup>, և Սարգիս քահանան, ով 1333 թ. գրված Ավետարանի նկարիչն է. «Ընդ նմին՝ Սարգիս սրբասէր քահանայի/ Հոգւոյ ծնաւդին իմ ըստ բանի/ Ձգիրքս մեզ զարդարաւդի/ Յիշման առնել զնա արժանի/ Ի ժամ սոսկալի պատարագի»<sup>39</sup>: 1311 թ. գրված Շարակնոցի 292ա թերթում նկարիչ «Ս»-ն հավանաբար Սարգիսը, իր հիշատակարանում աղաչում է հիշել գրիչ և ստացող Իգնատիոս քահանային և իրեն՝ «անարժան սարկաւագ զՄ[արգիս եւ զԾ]նաւդան իմ»<sup>40</sup>:

Ջորովանքի որպես գրչօջախի ստեղծման, կայացման և առաջադիմության գործում կարծում ենք մեծ մասնակցություն է ունեցել Վարդան Կրիլիկեցին:

<sup>33</sup> Ղ. Ալիշանը Ջորովանքին նվիրված հակիրճ ուսումնասիրության մեջ հիշատակում է Հովհաննես Ջորովանեցուն (ԺԿ դար), ով սրբագրել է Ստեփանոս գրչի օրինակած Հովհանն ոսկերեւանի «Յորդորակ ճառ» Հակոբ Ա կաթողիկոսի (1268-1286) համար (տե՛ս Ղ. Ալիշան, *Սիսուան*, էջ 156, Հր. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. 3, Երևան, 1946, էջ 596-597, Հ. Ոսկեան, *նշվ. աշխ.*, էջ 229):

<sup>34</sup> Տ. Պալեան, *Յուցակ*, էջ 33:

<sup>35</sup> Վիեն. 1465, Հ. Սեֆուլեան, *Յուցակ*, էջ 216-217:

<sup>36</sup> Նույն տեղում:

<sup>37</sup> Եղմ. 1566, Ն. Պողարեան, *Յուցակ*, հտ. 5, էջ 341: Ձեռագրի 613 թերթում պահպանվել է 1371 թ. բոլորգրով գրված կազմողի հիշատակությունը. «Ի թուին ՊԻ կազմեցաւ Շարակնոցս բազմամեղ ձեռամբ [անունը եղծված] կոչեցեալ կրօնատրի»:

<sup>38</sup> Վիեն. 1465, Հ. Սեֆուլեան, *Յուցակ*, էջ 217:

<sup>39</sup> Եղմ. 3602, Ն. Պողարեան, *Յուցակ*, հ. 11, էջ 19:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 204: Հիշատակարանի գիրն աղնատված է:

Ստանալով վարդապետական աստիճան, նա հավանաբար գրչության դպրոց ստեղծելու նպատակով սպասավորել է Ջորովանքում<sup>41</sup> : Վարդան վարդապետի մասին մանրամասն տեղեկություններ չեն պահպանվել: Ուստի անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել վարդապետի կենսագրության և գործունեության վրա: Նրա գրչությամբ մեզ հայտնի չորս ձեռագրերի հիշատակարանների բովանդակությունը թույլ է տալիս կատարել մի շարք ենթագրություններ: Վարդան վարդապետը ամենայն հավանակությամբ ծնվել է Կիլիկիայում: Ծննդյան թվականն անհայտ է: Նախնական կրթությունը ստացել է Գոնների կամ Ակնների վանական դպրոցներից մեկում՝ Հովհաննես Արքեպիսկոպոսի տնային վարդապետի Վերջինիս մասին գրում է՝ «զուսուցիչն իմ տէր Յոհանէս՝ զեղբայրն արքային Հայոց Հեթմոյ» (ՄՄ 4515, թ. 57) և նկատում, որ նրա հսկողությամբ է կատարելագործվել, հմտացել ու դարձել գրչության արվեստի գիտուն վարպետ՝ «մակացու գրչութեան» (ՄՄ 470, թ. 213)<sup>42</sup>: Գիտելիքները խորացնելու նպատակով մեկնել է Հայաստան<sup>43</sup> և ուսանել Գլաձորի համալսարանում՝ Եսայի Նչեցի րաբունապետի մոտ: Գտնվելով Կիլիկիայից հեռու, Վարդանը իրեն անվանում է օտարացած, հեռացած՝ «զտարակացեալ գրիչ» (ՄՄ 470, թ. 213): Ուսումնառության շրջանում Վարդանն օրինակել է մատյաններ Եսայի Նչեցու պատվերով՝ «հրամանաւ իմոյ վարժապետս իմ Եսայի»<sup>44</sup>: Վարդան Կիլիկեցին երախտագիտությամբ է հիշում Եսայի Նչեցու մանկավարժական գործունեության մասին՝ րաբունապետին գնահատելով որպես «զաստուածախմաստ», «զտիեզերալոյս», «սուրբ», «զամպս գերագոյն հրաշիւք լուսատու ցաւզ զվարժապետս իմ Եսայի» (ՄՄ 6558, թ. 416ա, 509ա)<sup>45</sup>:

Նկատենք, որ Վարդան վարդապետը, ով իր ընդօրինակած ձեռագրերի հիշատակարաններում միշտ հիշվում է «Կիլիկեցի» մականվամբ, նույնացվել է Վարդան Բարձրբերդցու<sup>46</sup> հետ: Հր. Աճառյանը վերջինիս գրչական գործունեու-

<sup>41</sup> Գլաձորի սաները, ավարտելով համալսարանը և ստանալով վարդապետական աստիճան՝ տարբեր վայրերում հիմնել են դպրոցներ և վարդապետարաններ: Տե՛ս Ա. Արևշատյան, Ա. Մաթևոսյան, Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն, Երևան, 1984, էջ 40-51:

<sup>42</sup> Ա. Մաթևոսյան, Հիշ. ԺԳ դար, էջ 605:

<sup>43</sup> Վարդապետական աստիճան ստանալու համար ուսանել են 7-8 տարի (տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 546, Լ. Խաչիկյան, Գլաձորի համալսարանի և նրա սաների ավարտական ատենախոսությունները, Աշխատություններ, հ. Ա, Երևան 2012, էջ 310):

<sup>44</sup> Ա. Մաթևոսյան, Հիշ. ԺԳ դար, էջ 853:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 864:

<sup>46</sup> Բավական սուղ են Վարդան Բարձրբերդցու մասին տեղեկությունները: Ղ. Ալիշանը գրում է. «Զայնու ժամանակաւ հռչակիւր գիտութեամբ Վարդան Բարձրբերդցի վարդապետ» (տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 149): Վարդանը իրեն համարում է Հովհաննես Արևադեբոս աշակերտը. «Աղաչեմ... յիշեցեմ... եւ ուսուցողին իմոյ տեսոն Հոհանիսի արհայի եղբար Հայոց Հերմոյ» (ՄՄ 10480, րէրք 213: Ա. Մաթևոսյան, Հիշ. ԺԳ դար, էջ 589-591): Հավանաբար իր կրթություն-

թյունը ներկայացնելիս՝ ունի հետևյալ փոքրիկ նշումը. «Թերևս իրենն է Մեկնութիւն քերականին Դիոնեսիոսի»<sup>47</sup>:

Դեռևս է դարում թարգմանված «Յաղագս երկնային քահանայապետութեանց Դիոնիսիոսի Արիոպագացոյ եւ էակաց գիրք»-ը<sup>48</sup> Վարդան Կիրիկեցին օրինակել է «ի մի կազմ» 1288 թ. «ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ բարեպաշտի եւ աստուածասիրի, այր ողորմածի եւ բարեւայելուչ թագաւորի, եւ ի հայրապետութեանն Հայոց տեառն Գրիգորիսի երկրորդ վկայասիրի եւ գերակատար իմաստասիրի, այր առաքինւոյ, ուղիղ եւ ճշմարիտ դաւանողի գերբորդութիւնն»<sup>49</sup>: Ձեռագիրը արտագրվել է անձնական օգտագործման համար: Կարծում ենք օրինակումը անմիջականորեն առնչվել է ուսումնական գործընթացի հետ: Կարելի է ենթադրել, որ 1288 թ. Վարդանը արդեն ուսանել է Գլաձորում: Ձեռագրի գրչութիւնն վայրը չի նշված, բայց հիշվում է՝ «զվարժապետս իմ զեսայի, որ զաւրինակն շնորհեաց»<sup>50</sup>:

Վարդան Կիրիկեցու օրինակած հաջորդ ձեռագիրը ՄՄ 470 թղթյա մատյանն է՝ բովանդակությամբ ժողովածու: Անհայտ են մատյանի գրչութիւնն վայրն ու թվականը: Քանի որ գրչագրի պատվիրատուն Եսայի նշեցին է (213ա), ենթադրում ենք, որ օրինակումը կատարվել է Գլաձորում 1289-1299 թթ. ժամանակահատվածում<sup>51</sup>: Վարդան Կիրիկեցու, Հովհաննես Երզնկացու և Մկրտիչ Թեղե-

նը ստացել է Կիրիկիայի Բարձրբերդ վանքի դպրոցում և ստացել «Բարձրբերդցի» մականունը: ԺԳ դարի գրիչ Սարգիս երեցը Վարդանին գնահատում է որպես «հաննաբեղ վարդապետ» և «հգաւր արքային գաւրեղ զինակիր», ակամատես Հեթում Ա թագավորի «հգնութեան, խտակօրոնութեան»: Սարգիս երեցը իր կազմած շարականների հեղինակների «Յուցակում» Վարդան վարդապետին է վերագրում մեկ տասնյակից ավելի շարականների հեղինակությունը (տե՛ս Ս. Ամատունի, Հին և նոր պարականոն կամ անվաւեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 15-16, 138): Բանասիրության մեջ հաճախ Վարդանին շիոթել են Վարդան պատմիչի հետ և տարբերելու համար նրան կոչել են Վարդան Փոփ (տե՛ս Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 5, Երևան, 1962, էջ 92-93): Վարդան Բարձրբերդցին ինքն էլ իր շարականներից մեկում վկայում է, որ Վարդան Արևելցին է գրել իր ժամանակի պատմությունը, և ոչ ինքը (տե՛ս Ս. Ամատունի, նշվ. աշխ., էջ 57): Ղ. Ալիշանը նույնպես գտնում է, որ երկու Վարդանները տարբեր են. «Զմեծ վարդապետն Վարդան՝ զհեղինակ Պատմութեան և զմեկնիչ Հնգամատենին և այլ բազում գրոց՝ ընդ սմա շիոթէին. զի նա Արևելցի է և մահացել է յամի 1271, իսկ սա է Բարձրբերդցի, որ յամի 1286 կոչէր զինքն աշակերտ Արքաեղբօրն» (տե՛ս Ղ. Ալիշան, Սրբուհան, էջ 149): 1286 թ. Հովհաննես Արքաեղբայրը, Վարդան Բարձրբերդցի և Բարսեղ գրիչները օրինակել են ժողովածու մատյան (ՄՄ 10480):

<sup>47</sup> Հր. Աճառյան, նշվ. աշխ., հ. 5, Երևան, 1962, էջ 92-93:

<sup>48</sup> Ն. Պողարեան, Յուցակ, հ. 6, Երուսաղեմ, 1972, էջ 17-18: Թեև մատյանի գրչության ժամանակը հայտնի է, սակայն ձեռագրի հիշատակարանը տեղադրվել է 1287 թվաշարում (տե՛ս Ա. Մաթևոսյան, Հիշ. ժԳ դար, էջ 604):

<sup>49</sup> Նույն տեղում:

<sup>50</sup> Նույն տեղում:

<sup>51</sup> Ա. Մաթևոսյանը ձեռագրի հիշատակարանը տեղադրել է 1287 թվաշարում, թեև չկա հիշատակում այդ մասին: Տե՛ս Ա. Մաթևոսյան, Հիշ. ժԳ դար, էջ 605:

նացու համատեղ գրչությամբ մեզ է հասել Ներսես Համբրոնացու «Մեկնութիւն սաղմոսաց» երկի ընդօրինակութիւնը (ՄՄ 6558): Զեռագրի պատվիրատուն է «զաստուածիմաստ և զտիեզերալոյս սուրբ ըրաբունապետն Եսայի»: Հստ Մկրտիչ Թեղենացու վկայության, օրինակմանը մասնակցել է Վարդանը՝ «եւ ապա սակաւ ինչ այլ ոմն՝ Վարդան անուն, ի նահանկէն Կիլիկիոյ, զորոց զվարձս հատուցէ Տէր»<sup>52</sup>: Զեռագիրը տարբեր հանգամանքների բերումով մնացել էր անավարտ<sup>53</sup>: Հանգամանքներից մեկը կարող է լինել Վարդանի վերադարձը Կիլիկիա: Ա. Մաթևոսյանը ձեռագրի հիշատակարանը տեղագրել է 1300 թվաշարքում: Կարծում ենք ձեռագրի օրինակումը սկսվել է 1298-1299 թթ. ոչ ուշ: Իսկ 1299 թ. Վարդանը արդեն Ձորովանքում ավարտում է Ավետարանի օրինակումը<sup>54</sup>: «Այլ և զիս զգրող սմին զՎարդան Կիլիկեցի զվերջին մեղաւորաց հանդերձ ծնողօքն մեր և եղբարբք... աւարտեցաւ իմով ձեռամբս... ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ՝ այր բարեպաշտի... ի հայրապետութեան Հայոց տեառն Գրիգորի երկրորդ Վկայասէրի»<sup>55</sup>:

Վարդան վարդապետի մասին գնահատանքով է խոսել ձորովանեցի գրիչներից Գրիգորը՝ 1331 թ. իր գրած ձեռագրի հիշատակարանում. «Աղաչեմ յիշել ի Տէր զյիշման արժանին զսուրբ վարդապետն զտէր Վարդան, որ միշտ խրատտու է մեզ ի բարիս եւ յորդորաւ/// սուրբ տառիս, զաւրինակն շնորհեաց, գրեսցէ///»<sup>56</sup>:

Ձորովանքի միաբանների համատեղ աշխատանքի արդյունքում ստեղծվել և մեր օրերն է հասել տասնմեկ մատյան: Ուսումնասիրելով Մաշտոցյան Մատենադարանում և այլ պահոցներում պահվող ձորովանքյան մատյանների վերաբերյալ ձեռագրական տվյալները, կարելի է ասել, որ Ձորովանքի գրչօջախում գրչագրերի ընդօրինակման աշխատանքները կատարվել են մեծ պատասխանատվությամբ: Այստեղ կարևորվել է և՛ գեղեցիկ գրելը, և՛ «ազնիւ», «ստոյգ» (1331 թ.), «լաւ եւ յընտիր» (1310 թ.) գաղափար օրինակների ընտրութիւնը, և՛ ձեռագրերի սրբագրումը (1326 թ., 1329 թ., 1333 թ.): Մեր ուսումնասիրութեան արդյունքում գիտական շրջանառութեան մեջ են դրվում 5 ձեռագիր՝ ի լրա-

<sup>52</sup> Զեռագրի ծագման, գրչության հանգամանքների մասին տեղեկացնում է Մկրտիչ Թեղենացու ընդարձակ հիշատակարանը (տե՛ս Գ. Հովսեփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մէջ*, Անթիլիաս, 1969, էջ 379-380, հմմտ. Ա. Մաթևոսյան, *Հիշ. ԺԳ դար*, էջ 864):

<sup>53</sup> Հովհաննէս Երզնկացու հորդորով ձեռագիրը ամբողջացրել է Մկրտիչ Թեղենացին Թեղենիքում 1302 թ.:

<sup>54</sup> Ա. Մաթևոսյան, *Հիշ. ԺԳ դար*, էջ 853:

<sup>55</sup> Գրչագրում պահպանվել է Դավիթ նվիրողի հիշագրությունը. «Զսուրբ Աւետարանս Յորդանանին տվի եւ Դաւիթ վարդապետս, Աստուած շնորհաւոր ասէ» (տե՛ս նույն տեղում):

<sup>56</sup> Տ. Պալեան, Յուցակ, էջ 33: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար (այսուհետ՝ ԺԳ հիշ.), կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, մասն Բ, Երևան, 2020, էջ 115:

ցումն մինչ օրս հայտնի 6-ի<sup>57</sup>:

Չորովանքի գրչական ժառանգության մեջ որոշակի տեղ են գրավում Մանրուամունք ձեռնարկների և խազավոր Շարակնոցների օրինակումները: Վանքի գրչատանը օրինակված երաժշտական տետրերից մեր օրերն է հասել հինգ ձեռագիր, որոնցից 2-ը պահվում են Մատենադարանում (ՄՄ 7034, 8570): Այդ մատյանների առկայությունը թերևս բացահայտում է ձորովանքի վանականների շրջանում հետաքրքրությունը երաժշտության նկատմամբ:

Սովորաբար խազագրեր պարունակող ձեռագրերը արտագրել են ոչ միայն գրչության, այլ նաև երաժշտական արվեստներին գիտակ մասնագետները: Այդպիսի մասնագետներից է եղել Առաքելը, ով աշխատել է Չորովանքի գրչատանը 1325-1338 թթ.: Առաքելը, որն իրեն անվանում է «եղկելի, բազմամեղ եւ անիմաստ» գրիչ, վարժ բոլորգրով ի վայելումն «սրբասնունդ, սրբասէր եւ պատուական» ներսես սարկավագի, օրինակել է երկու գրչագիր՝ Շարակնոց և Մանրուամունք: Շարակնոցը գրվել է 1325 թ. «ի թագաւորութեանս Հայոց տղահասակ մանկանն Լեւոնի, որդոյ արքային Հայոց Աւշնի, որդոյ արքային Լեւոնի եւ ի պարոնութեանն Աւշնի, տեառն Կառիկաւոյ, եւ ի հայրապետութեանն տեառն Կոստանդեա Դրագարկացոյ... ի խնդրոյ պատուական եւ սրբասէր սարկաւագի//»<sup>58</sup>: Գրիչը հիշատակարանում հիշում է իր ծնողներին, մերձավորներին:

Մագաղաթյա փոքրադիր (10,7 × 7,6 սմ) բոլորգիր Մանրուամունքը (ՄՄ 8570) Առաքելը գրել է 1338թ.՝ «Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Մանրուամուն եւ առնթեր՝ կցուրդ Փոխման Աստուածածնի... ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի, որդոյ արքային Աւշնի, ի հայրա[պետութեանն] տեառն Յակոբա...

<sup>57</sup> Հ. Ոսկյանը Չորովանքին նվիրված աշխատանքում ներկայացրել է անապատում գրված իրեն հայտնի 6 ձեռագրերի հիշատակարանները, որոնց շարժում հեղինակը վանքին պատկանող ձեռագրերից է համարում ՄՄ 3723 Ավետարանը: Մատյանում չի հիշատակվում գրչության վայրը: 105բ րեքի հիշատակագրության մեջ գրված է. «Յամի Զ երորդի յխներորդի (1301) թուականութեանս Հայոց եկն այր մի աստուածասէր եւ բարեպաշտ Մխիթար անուն եւ միաբանեցաւ Սրբոյ ուխտիս Սուրբ Քորոսի եւ Սրբոյ Նշանիս՝ լինել մասնակից աղաթից եւ պատարագաց, եւ երեւ ընծայս յարդար ընչից իւրոց՝ եզինս երկուս// Մխիթարի եւ ծնաւոց իւրոց: Ես՝ Ներսէս ծառա//» (տե՛ս Հ. Ոսկեան, նշվ. աշխ., էջ 230, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար (այսուհետ՝ ԺԴ դարի հիշ.), կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Դազարոսյան, մասն Ա, Երևան, 2018, էջ 16):

<sup>58</sup> Հիշատակարանը թափված է և անավարտ: Ձեռագրի գրչի և պատվիրատուի անունները եղծված են: Առաջի գրչի 1338 թ. գրած հիշատակարանի համեմատության արդյունքում Լ. Խաչիկյանը վերականգնել է անունները (տե՛ս ԺԴ դարի հիշ., մասն Ա, էջ 508): Ն. Պողարյանը նկարագրում է ձեռագրի մանրանկարչությունը. «Խորագիրները, սկզբնատողերը եւ զլիատառերը՝ կարմիր, մնացելը՝ սև մեղանով: Համառոտագրութիւնն եւ խազագրութիւն սովորական: Կարմրագիծ զարդագիր եւ լուսանցազարդ՝ Կանոններու սկիզբը: Գումատու եւ հանդերձ գլխագարդով՝ մեծ բաժանումների սկիզբը: Գումատու խորանագարդ իւր սարօք» (տե՛ս Եղվ. 1566, Ն. Պողարեան, Յուզակ, հ. 5, էջ 339, 340):

եղկելի եւ անհիմաստ գրչի Առաքելի, ի խնդրոյ սրբասնունդ, սրբասէր եւ պատուական սարկա[ւագին] Ներսիսի ի վայելումն անձին իւրոյ եւ յիշատակ բարի հոգւոյ եւ ծնաւդաց իւրոց» (ՄՄ 8570, թերթ 198բ)<sup>59</sup>: Ձեռագիրը լավ պահպանված է՝ զարդարված բուսական և թռչնային, եկեղեցի (39բ, 114բ) լուսանցազարդերով, ճակատագարդերով (80ա, 142ա, 158բ), կարմիր և գունային թռչնագրերով և զարդագրերով: Օգտագործված են կարմիր, կապույտ, կանաչ գույները: Նկարիչի անունը անհայտ է. հավանաբար գրիչն է: Հիշատակարանում Առաքելը հիշում է Մարկոսին. «ՉՄարկոս աղաչեմ յիշել ի Տէր»: 1333 թ. վանքում օրինակված Ավետարանի հիշատակարանը օգնում է բացահայտել Մարկոսի ով լինելը. «ՉՄարկոս դաստիարակ եւ սպասաւոր մեր»<sup>60</sup>:

Առաքել դպիրը արտագրել է Մանրուսմունք մատյան նաև Գրիգոր «աստուածարեալ եւ պատուական քահանայի» խնդրանքով 1326 թ. «ի հայրապետութեան տեառն Յակոբայ եւ ի թագաւորութեան Լեւոնի բարեսիրի և մանկագոյն պատանեկի»<sup>61</sup>: Ըստ Հ. Ճեմճեմյանի մատյանը գրվել է ընտիր բոլորգրով՝ ճոխ և հարուստ խազագրությամբ, հավանաբար գրչի վրձնով զարդարվել բազմաթիվ լուսանցազարդերով, զարդագրերով, խորանով (1) և կիսախորաններով (6) «բոլորն ալ միագոյն, բայց շատ ճաշակով»<sup>62</sup>: «Բազմամեղ եւ անարժան» Առաքելը հիշատակարանում խնդրում է չմեղադրել գրի «խոշորութեան եւ սղալանացն», քանի որ՝ «այս է կար մեր»: Առաքելը հիշատակարանում հիշում է իր եղբորը՝ հանգուցյալ Պետրոսին, արյունակից մերձավորներին՝ «զկենդանիքն եւ զննջեցեալսն»:

1310 (ՄՄ 7034) և 1311<sup>63</sup> թթ. Չորովանքի գրչատանը Իգնատիոս քահանան օրինակել է երկու Շարական մատյան: Մաշտոցյան մագաղաթյա փոքրագիր (14,4 × 10,3 սմ) Շարակնոցի հիշատակարանում «անպիտան», «անարժան» գրիչը գրում է. «Գրեցաւ Եղանակաւոր տառս ի թուխս 200<sup>0</sup> (1310), ձեռամբ... Իգնատիոսի, ի մենաստանիս, որ կոչի Չորոյ վանք, ընդ հովանեաւ Սրբուհոյ Աստուածածնիս, ի վայելումն մանկանց Նոր Սիովն[ի], ի լաւ եւ չընտիր աւրինակէ: Որք աւգտիք ի սմանէ ուսմամբ կամ գաղափարաւ, սրտի մտաւք յիշեսջիք զգծող

<sup>59</sup> ԺԴ դարի հիշ., մասն Բ, էջ 321:

<sup>60</sup> Եղմ. 3602, Ն. Պողարեան, Յուցակ, հ. 11, էջ 19: ԺԴ դարի հիշ., մասն Բ, էջ 171-172:

<sup>61</sup> Վնտկ. 709, Հ. Ճեմճեմյան, Յուցակ, հ. Գ, էջ 1094: ԺԴ դարի հիշ., մասն Բ, էջ 9: 1626 թ. ձեռագիրը նորոգվել է. «Եւ առդ յիշեցիք զվերջի ստացաւ սուրբ տառիս, զլոկ անուն Բաղտասարս Մուշեցի, որ նորոգել տուի զսա»:

<sup>62</sup> Նույն տեղում, էջ 1092:

<sup>63</sup> Եղմ. 3767, Ն. Պողարեան, հ. 11, էջ 204: ԺԴ դարի հիշ., մասն Ա, էջ 179, 207-208: Ն. Պողարյանը ձեռագրի վիճակը գնահատել է անբավարար, հնուքյունից թերթեր և լուսանցազարդեր վնասված: Մանրանկարչության մասին գրում է. «Կարմրագիծ կամ գունատուր զարդագիր եւ լուսանցազարդ՝ կանոններու սկիզբը, մեծ բաժանումները՝ հանդերձ գլխազարդով: Նկար՝ Աւետումն Գաբրիելի (էջ 4) վնասուած» (տե՛ս նույն տեղում, էջ 203):



սորա՝ զԻգնատիոս, եւ զագգայինսն մեր» (ՄՄ 7034, 300բ)<sup>64</sup>: Գրիչը արտագրել է գեղեցիկ մանր բոլորգրով և կարծում ենք նաև ինքն է նկարագրողել կիսախորաններով (1ա, 113բ), բուսական, թռչնային, եկեղեցի (125ա, 186բ, 194ա, 199ա) լուսանցազարդերով, ճակատազարդերով (84բ, 154ա, 194ա, 249ա, 263բ, 281բ) և գունային թռչնագրերով ու հանգուցազարդերով:

1311 թ. հավանաբար Պողոսի պատվերով արտագրած մագաղաթյա Շարականոցում գրիչ Իգնատիոսը գրում է. «Ո՛վ պատուական եւ սրբասէր երաժշտականք, որք աւգտիք ուսմամբ կամ արիինակաւ, զի է ստոյգ արիինակէ՛՛ սրտի մտաւք յիշեսջիք ըզգծող սորա՝ զԻգնատիոս սուտանունն քահանա, եւ Աստուած յիշողացդ ողորմեսցի ի միւս անգամ գալուստն. ամէն»<sup>65</sup>: Երուսաղեմյան ձեռագրում պահպանվել է ծաղկողի հիշատակարանը. «Գրեցաւ՛՛ [Շար]ականիս եւ Մանրուա[ուսմ]՛՛/[բագ]մամեղ եւ յարմար գրչ[ի]՛՛ ընդ հովանեաւ Սուրբ Նշա՛՛/[Գա]բրիելի եւ յիշատակ կ՛՛ կամեսցի ի յիշատա՛՛ ի հայրապետութեանն տեառն՛՛/[ի թա]գաւորութեանն Հայոց ա՛՛ ՉԿ (1311): Արդ, աղաչեմ զա՛՛/[աւ]կտիք ի սմանէ կամ ընդաւր[ի նակէք]՛՛ զգրող սորայ՛՛ զԻգնատիոս քահանայ՛՛ իւր եւ զԳէորգ քահանայ եւ զԾնող՛՛/[Պ]աւղաւսի հալալ արդեանց ի՛՛ ին եւ զիս զանարժան սարկաւագ զՍ՛՛/[զծ]նաւղան իմ որ ոսկով եւ գոյնագ՛՛ եւ պատկերաւք եւ ծաղկովք զա[րդարե]ցի. եւ որ յիշէ զմեզ, յիշեալ լիցի յ[ամենա]կալ Տեառնէն Աստուծոյ»<sup>66</sup>: Գրչի և ծաղկողի հիշատակարաններում գրչության վայրը մնում է անհայտ՝ գրի վնասման պատճառով: Սակայն երկու մատյանների հիշատակարանների բովանդակութեան և շարադրանքի նմանությունը, նաև նկարչի հիշատակած Սուրբ Նշան եկեղեցու անվանումը հիմք է տալիս ենթադրելու, որ երուսաղեմյան Շարականոցի գրչութեան վայրը Ձորովանքն է:

1311 թ. Կոստանդին Կարմիրվանեցի եպիսկոպոսի պատվերով Ստեփանոս գրիչը արտագրել է Հայսմավուրք մատյան: Գրչի հիշատակարանը տեղեկացնում է, որ թղթյա մատյանը, «վասն զի ոչ գոյր սոցայ տեղի անդորելոյ ի մի վայր», օրինակվել է գրչութեան երեք վայրերում՝ այդ թվում «Ի սուրբ ուխտն Ձորոյ կոչեցեալ վանք, ընդ հովանեաւ Սուրբ Նշանացն եւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Սիոնի»<sup>67</sup>:

<sup>64</sup> ԺԳ դարի հիշ., մասն Ա, էջ 179: Ձեռագրի 313ա քերթում գրված է ստացող Մատթեոսի հիշատակարանը. «Առդ, ես՝ տէր Մատթեոսս, որ առի զՇարակնոցս [ՉԾԹ]՞ ի հալալ [ընչից] իմոց յիշատակ ինձ եւ ձն[ողաց]՛՛/[հ]ն[ր] [Ս]ոսրբանդատին եւ՛՛/[ե] [բ]ուչն իմոյ՛՛ Մախմուրին եւ եղբարց իմոց՛՛ Միղզին, եւ Միբաբին եւ Աւետիկին, եւ եղբարց իմոց հանգուցեալ ի Քրիստոս՝ [նուտ]այվերտէ, Քաղբաթին, Ամիրին եւ եղբարորդոցն իմոց՛՛ Քաղբաթին, Թաղրիվերմիչին, Սուրբապին՛՛/[բաղ]իչին, Արարիչն Աստուած ընդ երկալ[ի]ն աուրս պահէ» (տե՛ս նույն տեղում):

<sup>65</sup> Եղմ. 3767, Ն. Պողարեան, Յուցակ, հ. 11, էջ 204: ԺԳ դարի հիշ., մասն Ա, էջ 206:

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 207-208: Կարծում ենք նկարիչը Սարգիս Բահանյան է, ով կարող է լինել նաև 1333թ. Ավետարանի նկարիչը:

<sup>67</sup> Ա. Դանիելեան, Յուցակ, էջ 34-35: ԺԳ դարի հիշ., էջ 206:

Չորովանքի գրչատանը աշխատել է Վահրամի որդի Գրիգոր քահանան: Նրա գրչությամբ մեզ է հասել երեք ձեռագիր: 1331 թ. «ձեռամբ ամենաթշվառի... ժանտատես գրով եւ բազմաշփոթ մտաւք» Գրիգորը ընդօրինակել է թղթյա Ավետարան<sup>68</sup>: Ըստ Տ. Պալյանի, Գրիգորը մատչանը գրել և ծաղկել է իր համար:

1334 թ. վանքի միաբան «պատուական եւ սրբասնեալ» Պողոս քահանայի պատվերով Գրիգորը նորից օրինակել է Ավետարան՝ բազմաթիվ լուսանցազարդերով, խորաններով (10) և կիսախորաններով (4) զարդարված: Ձեռագիրը մեզ է հասել ամբողջական և լավ պահպանված<sup>69</sup>: Նշենք, որ ձեռագրի գրչության վայրը չի հիշատակված և ձեռագրացուցակում ենթադրաբար է նշվում Չորովանքը: Համաձայն գրչի վկայության, ձեռագիրը գրվել է «ի հայրապետութեան տեառն Յակոբա եւ ի թագաւորութեանս Հայոց Լեւոնի որդուց Աւշնի արքայի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Նշանիս»: Համեմատելով Գրիգորի օրինակած ձեռագրերի հիշատակարանների բովանդակությունը, կարող ենք հստակեցնել, որ մատչանի գրիչը Վահրամի որդի Գրիգորն է, և ձեռագիրը պատկանում է Չորովանքին: Երկու գրչագրերի հիշատակարաններում էլ գրիչը հիշում է իր ծնողներին, հարազատներին, վանական եղբայրներին: Գրիգորը իր համար Չորովանքում 1329 թ. ընդօրինակել է Հովհաննես Ոսկեբերանի «Մեկնութիւն Մատթէի» գործը: Այս ձեռագրի նախագաղափարի ընդարձակ հիշատակարանը արտագրվել է 1821 թ. գրված ձեռագրում<sup>70</sup>: Գրիգորը հիշում է և՛ Ակնների եղբայրության միաբաններին, և՛ Չորովանքի սուրբ ուխտի հոգևոր եղբայրներին, «զորոց ի մանկութենէ իմմէ գոհ էի, եւս առաւել այժմ, զի զտունս ետուն, որ հանգեայ ի գրելու եւ յորդորող էին միշտ», նաև իր ծնողներին և հարազատ եղբայրներին. «Թէ արժանաւորէք յիշել զերիցս եղկելի եւ զժանտամիտ գրաւղս եւ ստացաւղս Գրիգոր եւ զվախճանեալ հայրն իմ զՎահրամ եւ զմայրն եւ զերիս եղբարսն զԱնդրէաս կրաւնաւոր, եւ զՍարգիս եւ զԹորոս... եւ զամենայն մեր զկենդանիս եւ զմեռեալսն»<sup>71</sup>:

Չորովանքի գրատանը արտագրված հաջորդ ձեռագիրը 1333 թ. արծաթապատ կազմով խաչելության և հարուստ պատկերներով, խոշոր բոլորգրով արտագրված Ավետարանն է: Մագաղաթյա մատչանի գլխավոր հիշատակարանը փաստում է, որ ձեռագիրը գրվել է Առաքելի պատվերով «ի թագաւորութեան

<sup>68</sup> Տ. Պալյան, *Յուցակ*, էջ 32: ԺԴ հիշ., մասն Բ, էջ 114-115:

<sup>69</sup> Վնտկ. 164, Բ. Սարգիսեան *Յուցակ*, էջ 695-698: ԺԴ դարի հիշ., մասն Բ, էջ 193: Հ. Ոսկյանը ենթադրաբար է ձեռագրի գրչության վայրը համարում Չորովանքը (տե՛ս Հ. Ոսկեան, *նշվ. աշխ.*, էջ 230):

<sup>70</sup> Վիենն. 1465, Հ. Սեֆուլեան, *Յուցակ*, էջ 217: ԺԴ դարի հիշ., մասն Բ, էջ 59-62:

<sup>71</sup> Նույն տեղում:

կեռնի/ Որ է տղայ եւ պատանի»<sup>72</sup>: Չափածո հիշատակարանում գրիչը, որի անունը հայտնի չէ, իրեն բնութագրում է որպես «անարհեստ» գրիչ և խոստովանում, որ չի տիրապետում գրչության արվեստին. «Արդ, աղաչեմ յամենայնի/ Չլինել սմա մեղադրելի/ Վասն զի գիր չգիտէի գրագրի/ Եւ ոչ արուեստ գրագարձի/ Չի թէ խոշոր զսա գրեցի/ Կամ թէ սղալ ի սմա գտանի/ Յաւրինակէն թէ սա լինի/ Կամ ի գրչէս անարհեստի»: Հավանաբար սա գրչի առաջին օրինակումն է:

Ձորովանքից մեզ հասած ձեռագրերի, պահպանված հիշատակարանների և հարակից տվյալների ուսումնասիրության արդյունքում կարելի է արձանագրել, վանքում մշակութային կյանքը կազմակերպող և զարգացնող վանականները ապագա սերունդներին փոխանցել են արժեքավոր ժառանգություն և ամրագրել իրենց արժանի տեղը հայ մշակութի պատմության մեջ:

HASMIK BADALYAN

#### DZOROVANK‘ MONASTRY OF CILICIAN ARMENIA AND ITS SCRIPTORIAL HERITAGE

**Keywords:** Cilicia, Akner monastery, Dzoroberd monastery, Vardan Kilikets‘i, centre of calligraphy, scriptorium, scribes, musicians and miniaturists of Dzorovank‘, colophon.

The article is devoted to the history of the Dzorovank monastery, one of the spiritual and cultural regional centers of Cilician Armenia in the 13th-14th centuries, and to the activities of the monastery scribes, miniaturists, and members of the congregation. The historical and philological research for the assessment of the scriptorium’s heritage is based on the catalogs of Armenian manuscripts and the manuscript sources of Matenadaran, Mesrop Mashtots‘ Institute of Ancient Manuscripts. For the first time, 11 manuscripts (only 6 were previously known) from the Dzorovank‘ monastery have been studied and brought to scholars’ attention. The names of scribes and miniaturists are listed, as well as their activities and the circumstances of copying those manuscripts are discussed.

<sup>72</sup> Եղմ. 3602, Կ. Պողարեան, Յուզակ, Բ. 11, էջ 18-20: ԺԳ դարի հիշ., մասն Բ, էջ 171-172: Կ. Պողարյանը այսպես է նկարագրում ձեռագրի մանրանկարչությունը. «Ջարդագիր՝ թոչնագիր, ծաղկագիր՝ գունաւոր եւ ոսկեզարդ, կարմիր, կապոյտ եւ ոսկեայ երկաթագիր: Խորան՝ թղ. 1բ-2ա, 6ա, 109ա, 180ա, 298ա: Լուսանցագարդ՝ գունաւոր եւ ոսկեզարդ, յաճախ յառող նկարներ: Խորագիր՝ ոսկեայ բոլորգիր: Սկար՝ թղ. 108բ, Մարկոս. առաջի ոտից ի գունս՝ Սարգիս ծաղկաւղ Բեղ ի յանձին (179բ), Դովկաս (232բ), Յովհաննէս, աջ անկիւնը Առաքել առ Բեզ յանձն, գունաւոր եւ ոսկեդրուագ»:

АСМИК БАДАЛЯН

**РУКОПИСНОЕ НАСЛЕДИЕ МОНАСТЫРЯ  
ДЗОРОВАНК КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ**

**Ключевые слова:** Киликия, Монастырь Акнер, Монастырь Дзоровберд, Вардан Киликеци, центр книгописания, скрипторий, дзорованкские писцы, музыканты и миниатюристы, колофон.

Статья посвящена истории монастыря Дзорованк, одного из духовно-культурных региональных центров Киликийской Армении XIII-XIV веков, деятельности монастырских писцов, миниатюристов и членов конгрегации. Историко-филологическое исследование основано на рукописных источниках Матенадарана имени Маштоца и каталогах армянских рукописей. Впервые были введены в научный оборот 11 рукописей из монастыря Дзорованк (ранее были известны 6 рукописей). Выявлены имена писцов и миниатюристов, результаты их деятельности, обстоятельства копирования ими рукописей.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները  
հայ-մոնղոլական հարաբերություններում..... 5

### Ստյոպա Պետոյան

Վահան և Սմբատ Դադյանցիների գրահրատարակչական  
գործունեությունը Շուշիում 1880-ական թթ. .... 33

### Անի Ոսկանյան

Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման  
փորձերը 1910-1914 թթ. .... 55

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### Գլորգ Տէր-Վարդանեան

Յովհաննէս Վ. Զօհրապեանի ձեռագրական և բնագրագիտական վաստակը.  
Ինֆնակենսագրականը..... 67

### Օվսաննա Խաչատրյան

Գրիգոր Խլաթեցու կաֆաները որպես գանձարանային կաֆաների առաջին նմուշներ..... 91

### Հայկ Համբարձումյան

Սննդային մոտիվները «Սասնա ծռեր» էպոսում և հայ  
միջնադարյան գրականության մեջ. հերոսների նաշացանկը ..... 105

### Գառնիկ Ա. Հարությունյան

«Կտակ շարչարանաց»-ի կամ Ավագ ուրբաթի ֆարոգի՝ Սիմեոն  
Ա. Երևանցի կաթողիկոսի խմբագրությունը ..... 133

### Հասմիկ Բադալյան

Կիրիկյան Հայաստանի Զորովանքը և գրչական ժառանգությունը ..... 150

### Դավիթ Սրկ. Սահակյան

Կրկին «Հանախասպատոմ հառերի» հեղինակի ու թվագրման հարցի շուրջ,  
Աբրահամ Տերյանի մի հրատարակության առթիվ ..... 165

## ԱՐՎԵՍ

### Իվեթ Թաշարյան, Սարա Լափորթ-Էֆթելսարյան

Մատենադարանի նորահայտ նկարագարող մի էջ, որպես մշակութային  
ազդեցությունների խորհրդանիշ ..... 186

**Միրանուշ Բեգլարյան**

Թորոս Տարոնացու մանրանկարների պատկերագրության մարիամաբանական հեներ ..... 196

**ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ****Ստելլա Վարդանյան**

Քսուֆի և օժանելիֆի պատրաստման հին հայկական դեղագիրը  
Քսենոֆոնի «Անաբասիս» երկում ..... 215

**Կարինե Մոսիկյան**

Մարմնագննական (ֆիզիոգնոմիկական) երկերը Մատենադարանի ձեռագրերում ..... 225

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 7-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ  
(2021 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-27) ՆՅՈՒԹԵՐ**

**Զոհրաբ Գևորգյան**

Թուղթը, առօրեականությունը և հասարակական փոխակերպումները  
Կիլիկյան Հայաստանում ..... 248

**Գևորգ Ղազարյան**

Դոնվիակ պատարագի ավանդույթը Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգում ..... 259

**Անդրանիկ Եսայան**

Զակամ Գավառը ժէ դ.-ժԸ դ. Առաջին Քառորդին ..... 285

**Տիգրան Գրիգորյան**

«Աղամի արարումը» թե՛ «Հին ատուրցն Աստուած».  
Դանիել մարգարեի վախճանաբանական տեսիլքը Նորավանքում  
(վերլուծություն ըստ կանոնական և պարականոն բնագրերի) ..... 299

**Շողակաթ Դևրիկյան**

Գրիգոր Լուսավորչին ներկայացնող մեկէջյա փորագրանկարները 18-րդ դարում  
Կոստանդնուպոլսում տպագրված երեք «Յայսմատուր»-ներում ..... 331

**Գրեհա Գասպարյան**

Նոր Զուղայում նկարագարողված ՄՄ 6772 Ավետարանի մեկ  
էջը արևմտաբրիտանական արվեստի համատեքստում ..... 342

**Արմինե Պետրոսյան**

Թոչնամարտի թեման Հայաստանի Ժ-ԺԴ դարերի եկեղեցական ֆանդակում.  
պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը ..... 353

**Վահե Ավետիսյան**

Հույն (Բյուզանդական) ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքը  
Կիլիկիայում ԺԳ-ԺԴ դդ. կեսերին ..... 366

**Հովհաննես Ա. Իգիթյան**

Սարգիս Փիլիսոփա Բ-ի կորսված 532-ամյա պարբերաշրջանները.

Վերականգնում մաս երկրորդ. Հայոց շարժական տոմար-պարբերաշրջանը..... 379

**Գոռ Գալստյան**

Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ» երկը ..... 425

**ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ****Անի Առաքելյան**

Հակոբ երեց Ամասիացի (Էմասիացի). հայկական ուշ միջնադարի

նորահայտ բանաստեղծը ..... 445

**Տաթևիկ Մանուկյան**

Տեր Խաչատուր Քուրտանցին և նրա փերականությունը ..... 476

**Վանո Եղիազարյան, Անի Ժ. Ավետիսյան**

Մի անտիպ երկլեզվյան տաղ Հովհաննես Թյկուրանցուց ..... 504

**ՀԱՂՈՐԴՈՒՄ****Լուսինե Սարգսյան**

Հայ ձեռագրավեստի ուսումնասիրությունը թվային դարում..... 509

*Բանբեր Մատենադարանի* հանդեսի հոդվածների ձևավորմանը

վերաբերող պահանջներ ..... 525

---

**CONTENTS**
**HISTORY****Gagik Danielyan**

Official Correspondence and Diplomatic Gifts in the  
Armenian-Mongol Relations (Parts 1 and 2).....5

**Styopa Petoyan**

Publishing Activities of Vahan and Smbat Dadyants‘  
in Shushi in the 1880s.....33

**Ani Voskanyan**

The Armenians’ Attempts to Revive the Economy in Adana  
Province Between 1910 and 1914.....55

**PHILOLOGY****Gevorg Ter-Vardanyan**

Yovhannēs Vardapet (Archimandrite) Zohrapean as  
Text Critic and Scribe, His Autobiography.....67

**Ovsanna Khachatryan**

The *Kafas* of Grigor Khat‘ets‘i as the First Samples  
in the Collections of Sacred Chants .....91

**Hayk Hambardzumyan**

Food Motives in the Epic “Daradevils of Sassoun” and in the  
Armenian Medieval Literature: Heroes' Menu.....105

**Garnik A. Harutyunyan**

The Recension of the “Testament of the Passion  
[of Christ]” or the Sermon of Good Friday by Catholicos Simeon I Erewants‘i .....133

**Hasmik Badalyan**

Dzorovank‘ Monastery of Cilician Armenia  
and its Scriptorial Heritage.....150

**Deacon David Sahakyan**

Once Again on the Authorship and Date of “The Oft-Repeated Discourses  
of St. Gregory the Illuminator”: on the Occasion of a Recent Publication  
by Abraham Terian.....165



## ART

**Yvette Tajarian, Sarah Laport-Eftekharyan**

A Newly Discovered Illustrated Page as a  
Symbol of Cultural Influences.....186

**Siranush Beglaryan**

The Mariological Basis of T'oros Taronats'i's Iconography.....196

## NATURAL SCIENCES

**Stella Vardanyan**

The Ancient Armenian Recipe for Preparing Ointment and Incense  
According to Xenophon's *Anabasis*.....215

**Karine Mosikyan**

Physiognomical Works in the Manuscripts  
of Matenedaran.....225

**PROCEEDINGS OF THE 7TH INTERNATIONAL CONFERENCE OF  
YOUNG RESEARCHERS (NOVEMBER 25-27, 2021)**

**Zohrab Gevorgyan**

Paper, Everyday Life and Social Transformations  
in Cilician Armenia.....248

**Gevorg Kazaryan**

The Tradition of the Liturgy Behind Closed Doors in the Armenian  
Apostolic Church Rite.....259

**Andranik Yesayan**

The Province of Zakam in the 17<sup>th</sup> Century and the First  
Quarter of the 18<sup>th</sup> Century.....285

**Tigran Grigoryan**

The Creation of Adam or Ancient of Days?: The Prophetic Vision of Daniel  
in Noravank' (a Discussion on the Basis of Canonical and Apocryphal Texts).....299

**Shoghakat Devrikyan**

Full-Page Engravings with Images of Gregory the Illuminator in the  
Three Synaxaria Published in the 18th Century in Constantinople.....331

**Greta Gasparyan**

One Page of the Gospel M 6772 Illustrated in New Julfa in the  
Context of Western Christian Art.....342

**Armine Petrosyan**

Birds Combat Scene in Armenian Church Decoration of X-XIV  
Centuries: Iconography and Symbolic Perceptions.....353

**Vahe Avetisyan**

Greek-Orthodox (Byzantine) Community in Cilicia  
From the XIII - to the Middle of the XIV Century.....366

**Hovhannes A. Igityan**

The Lost 532 Years Calendar-Cycles of Sargis Philosopher the Second.  
Reconstruction (Part II. The Armenian Non-Fixed  
Calendar and the 532-Year Cycle).....379

**Gor Galstyan**

The *Commentary of the Armenian Calendar*  
by Yovhannēs Sarkavag.....425

**PUBLICATIONS****Ani Arakelyan**

Priest Yakob Amasiats‘i (Emasiats‘i):  
An Unknown Late Medieval Armenian Poet.....445

**Tatevik Manukyan**

Ter Khach‘atur K‘urtk‘ants‘i and His Grammar.....476

**Vano Yeghiazaryan, Ani J. Avetisyan**

An Unpublished Poem by Yovhannēs T‘lkurants‘i.....504

**REPORT****Lusine Sargsyan**

Study of Armenian Manuscript Art in Digital Era.....509  
Requirements for the articles in the journal of The *Bulletin of Matenadaran*.....525

## СОДЕРЖАНИЕ

### ИСТОРИЯ

#### Гагик Даниелян

Официальная переписка и дипломатические дары в Армяно-Монгольских отношениях (части 1 и 2).....5

#### Стёпа Петоян

Издательская деятельность Ваана и Смбата Дадянцев в Шуши в 1880-х гг.....33

#### Ани Восканян

Попытки армян восстановить экономику в провинции Адана в 1910–1914 гг.....55

### ФИЛОЛОГИЯ

#### Геворг Тер-Варданян

Рукописное и текстологическое наследие вардапета Ованеса Зограбяна и его автобиография.....67

#### Овсанна Хачатрян

Кафы Григора Хлатеци как первые образцы жанра в певческих сборниках-гандзаранах.....91

#### Айк Амбарцумян

Пищевые мотивы в эпосе «Сасна црер» (Давид Сасунский) и в армянской средневековой литературе: меню героев.....105

#### Гарник А. Арутюнян

Редакция “Завещания страстей...”, или проповеди Страстной пятницы католикоса Симеона I Ереванци.....133

#### Асмик Бадалян

Рукописное наследие монастыря Дзорованк Киликийской Армении.....150

#### Диакон Давид Саакян

Вновь об авторстве и времени создания “Многовещательных речей св. Григория Просветителя” (по поводу публикации Абраама Терьяна).....165

## ИСКУССТВО

### **Ивет Таджарян, Сара Лапорт-Эфтехарян**

Новооткрытая иллюстрированная страница как символ культурных влияний..... 186

### **Сирануш Бегларян**

Мариологическая основа иконографии Гороса Таронаци..... 196

## ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

### **Стелла Варданян**

Древний армянский рецепт приготовления мази и благовония из «Анабасиса» Ксенофонта ..... 215

### **Карине Мосикян**

Сочинения о физиогномике в рукописях Матенадарана ..... 225

## ИЗ МАТЕРИАЛОВ 7-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ МОЛОДЫХ УЧЕНЫХ (25-27 НОЯБРЯ, 2021 Г.)

### **Зохраб Геворгян**

Бумага, повседневная жизнь и социальные преобразования в Киликийской Армении..... 248

### **Геворг Казарян**

Традиция Литургии при Закрытых Дверях в обиходе Армянской Апостольской церкви..... 259

### **Андраник Есяян**

Провинция Закам в 17 – первой четверти 18 в..... 285

### **Тигран Григорян**

“Сотворение Адама” или “Ветхий Днями”: пророческое видение Даниила в Нораванке (анализ по Каноническим и Апокрифическим текстам) ..... 299

### **Шогакат Деврикян**

Полнолистовые гравюры с изображением Григория Просветителя в трех сборниках «Синаксария», изданных в XVIII веке в Константинополе..... 331

### **Грета Гаспарян**

Страница Евангелия М 6772 в контексте Западно-христианского искусства..... 342

**Армине Петросян**

Сюжет с «Борющимися» птицами в церковной пластике  
 Армении X-XIV вв.: иконография и символизм.....353

**Ваэ Аветисян**

Греко-Православная (Византийская) община  
 в Киликии XIII - середины XIV вв.....366

**Ованнес А. Игитян**

Утраченный 532-летний календарный цикл Саргиса Философа второго.  
 Реконструкция (часть II. Армянский подвижный календарь и 532-летний цикл).....379

**Гор Галстян**

Толкование армянского  
 календаря Ованнеса Саркавага.....425

**ПУБЛИКАЦИИ****Ани Аракелян**

Иерей Акоб Амасийский (Эмасийский),  
 неизвестный армянский поэт Позднего Средневековья.....445

**Татевик Манукян**

Тер Хачатур Куртканци и его грамматика.....476

**Вано Егиазарян, Ани Ж. Аветисян**

Неизданное двуязычное стихотворение  
 Ованнеса Тлкуранци.....504

**СООБЩЕНИЕ****Лусине Саргсян**

Изучение армянского рукописного искусства в цифровую эпоху.....509

Требования к оформлению статей в журнале *Вестник Матенадарана*.....525

**ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**Հատոր 33**

**BULLETIN OF MATENADARAN**

**Volume 33**

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**

**Том 33**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգաղյանի  
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի  
Շապիկին՝ Թորոս Տարոնացի, Տիրամայրը մանկան հետ, Մատթեոսի  
Ավետարանի անվանաթերթ, ՄՄ 6289, էջ 12ա  
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան  
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 33,5

տպաքանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

[publishing.matenadaran@gmail.com](mailto:publishing.matenadaran@gmail.com)

Ամսագրի թվային տարբերակը՝

[banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/](http://banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/)